ԲԱՌԱԲԱՐԴՈՒՄ

Ըստ բառակազմության բառերը լինում են պարզ և բաղադրյալ: Բաղադրումը իրացվել ու իրացվում է տարբեր եղանակներով՝ աճականով, հիմքային ձայնավորով (բնակազմիչ), բարդմամբ (հապավումը սրա տեսակն է) և ածանցմամբ: Սրանց մի մասն արդի հայեցակետով կորցրել է իր արժեքը: Բառաբարդումը՝ որպես բառակազմական եղանակ, ստվար մաս է կազմում և հենվում է իմաստային ամենաընկալելի ձևութաբանական տարրերի գործունեության վրա: Բառակազմության ուսումնասիրությունը հայերենագիտության մեջ ծավալուն ընթացք է ստացել Դ. Թրակացու «Քերականության արվեստ» գրքի թարգմանության շրջանից: Բայց ավելի խոր ու բազմակողմանի հետազոտվել է XX դարում Հր. Աճառյանի, Ս. Աբեղյանի, Գ. Սևակի, Ա. Սուրվալյանի, Էդ. Աղայանի, Ա. Աբրահամյանի, Գ. Ջահուկյանի, Ա. Սուքիասյանի, Ս. Էլոյանի, Ս. Գալստյանի, Ալ. Մարգարյանի կողմից: Այն քննարկվել է համաժամանակյա և տարժամանակյա պատմական հայեցակետերով: Պատմական փոփոխությունների հիմքի վրա որոշ կաղապարներ հնացել, դուրս են մղվել կամ գործածվում են մասնակիորեն: Ըստ այդմ էլ կան գործուն, կենսունակ և ոչ գործուն, ոչ կենսունակ կաղապարներ, ուստի վերոհիշյալ հայեցակետերն անխտիր գործածվում են բառակազմության ուսումնասիրության ժամանակ: Բառակազմական կաղապարները լեզվի կառուցվածքի միավորներն են տիպերը, որոնք իբրև բաղադրիչ տարրերի հետևողական շարք, կանոնարկված փոխկապակցվածությամբ (փոխհարաբերություն) են դրսևորվում և ձևակերպվում են որոշակի բանաձևերով: Լեզվաբանական կաղապարների տեսաբան Գ.Ջահուկյանը, որը բառակազմությանն առավել հանգամանորեն անդրադարձել է «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» գրքում, բառային բարդության սովորական ձևը «երկբաղադրչությունն» է համարում (1. 214): Դա ցանկացած կառույցի ուսումնասիրության և ուսուցման ելակետային ու լայն ուղին է: Այդպես նաև մանրամասնված են գիտաբառերը (11. 337-3466:) Բառաբարդումը ստացվում է երեք ուղիներով *շարահյուսական կապակցություններից, բառակազմական կաղապարներից ու բառափոխառություններից* և այն քննարկվում է լայն ու նեղ տեսանկյուններով: Բարդության լայն քննարկման դեպքում, բնական է, նրա կազմի մեջ մտնող բոլոր բաղադրիչները արժեքավորված և չարժեքավորված ձևույթները *(արժեքավորվածներն* են հիմնական ձևույթները

արմատները, բառակազմական երկրորդական ձևույթները ածանցները, բառահարաբերական երկրորդական ձևույթները վերջավորություններ, բայահիմքային, եղանակային, ժխտական լծորդային ցուցիչ-ձևույթները, հոդակապը, իսկ *չարժեքավորվածները* աճական, բնակազմիչ ձայնավորներ, ձայնակապ, բարեհնչունության համար կիրառվող հնչյուններ, արմատական, հիմքային կիրառություն ունեցողներ *-ն, -ք*), նկատի են առնվում և ենթատեսակներ կազմում, իսկ նեղ քննարկման դեպքում հիմաստակիր մեծ միավորներն են նկատի առնվում (հիմք, արմատ): Բառաբարդման ուսումնասիրություններն ու տեսակավորումներն առ այսօր սպառիչ կատարելության չեն հասել: Նույնիսկ ցանկացած բանաձևի ձևույթների խորհրդանիշերի համար միանշանակ ձև չկա: Հիմնականում օտար տառեր են կիրառվում (1, 2, 3, 4) Aa, Bb և այլն, մինչդեռ ուսուցման համար գերադասելի և նպատակահարմար է հայերեն փոխկապակցված տառանուններով կիրառությունները ի հակադրություն գաղափարագրության սկզբունքով ստեղծված մաթեմատիկական թվանշանների և քիմիական նշանակումների հակիրճ ու կայուն ընդունված և արդեն իրենց տեղը գտած միջազգային նշանագրերի:էդ. Աղայանը այդ մոտեցմամբ տառային հապավումները կոչում է սիմվոլիկ (խորհրդանշանային) բարդություն (11. 302, 12. 466), որը նպատակային չէ:Որպես ձևույթների հայեցի խորհրդանշան արժե գործածել հետևյալը. *հիմնական ձևույթի արմատի* համար գործածել(մեծատառ) *Ա, բառակազմական երկրորդական ձևույթի ածանցի* համար(փոքրատառ) *ա, բառահարաբերական երկրորդական ձևույթի վերջավորության համար ք* (իրենց բոլոր ենթատեսակներով անվանական, բայական, հոդային, թվանիշ, հոլովանիշ, դիմանիշ և այլն), հիմաստազուրկ երկրորդական ձևույթ *հոդակապի* համար *հ* (իր բոլոր տեսակներով *-ա-, -ե-, -ու-, -և-, -ի-, -զ-, -ատ-, -ըստ-, հա*), աճականը ճ, *ժխտական մասնիկները, բայահիմքային ցուցիչները, մթագնված, բայց գիտակցվող հոլովիչները ծ*, հիմաստազուրկ նախդիրները ներառյալ հնչյունափոխված տարբերակները (*ի-/-հ, զ-ս*), արմատական, անվանահիմքային *-ն-, -ք, -ս* ցուցիչները, ձայնակապը, դյուրահնչունության համար կիրառվող *-ն* (հնձ-ն-ից), *-ա* (հնձ-*ա-ն*-ից), *ավելացած հնչյուններ, բնակազմիչ քարացած միջանկյալ ձայնավորները մ*, կամ սրանցից առավել ընկալելի, պարզ ու մատչելի պայմանական հայեցի անվանումներ(հանրալեզվաբանականին ձգտողները գերադասում են միջազգային ընդունված բանաձևերի տառերը, բայց մանրակաղապարային ձևույթների համար դրանք իրենց չեն արդարացնում): Բաղադրյալ բառերի կաղապարված (մոդուլացված) բանաձևերը, ինչպես նշեցինք, առ այսօր միանշանակ անվամբ, տեսակավորմամբ համընդհանուր ու վերջնական ճանաչում չեն

ստացել(համեմատաբար ամփոփ ներկայացված է Հ. Պետրոսյանի կողմից 4. 74-79, 289-291): Ձևույթների զգալի մասը արդի կտրվածքով որպես տիպաբանական կաղապարներ, այլաբնույթ են ներկայացվում, որը երբեմն տարակուսելի է մնում: Օրինակ թեքման ու կցման ժամանակ դրվում են + և / նշանները կցվողը *+*-ով, թեքվողը */*-ով (սեղան *+ի - Ա + բ*, հոր - *Ա / բ*, խառը հորից - *Ա / բ+ բ* 4. 290): Կամ միևնույն կաղապարը պատմական և արդի հայեցակետերով երրորդ- *եր + ր + որդ (Ա + ա+ա), եր + որդ (Ա+ա),* կամ *մեծացու* պատմականորեն *մեծ+ ա + ց + ր* (ավելացած հնչյուն) + *ու (մեծացո մեծացոյց –ից* պատճառական ածանցի մնացորդ *ո*-ու հնչյունափոխություն, նաև *ու-ր դրափոխություն)* *Ա + ծ+ծ +մ +ա, իսկ արդի հայեցակետով Ա +ծ +ա +ծ +բ (ր-ն* պատճառական կատարյալ հիմքի *-ր-* ցուցիչն է *ն-ր.* 5. 102), կամ *հլու (հու+լու) Ա+Ա,* արդիով *Ա* և այլն: Բարդությունները դասակարգվում են տարբեր հիմունքներով, որոնք արժեն միավորելուն: Օրինակ «Օգնություն ուսուցչին» տեսանկյունով (թեև դպրոցական ծրագրավորված ժամերին դրան ուշադրություն չեն դարձնում չնայած ավարտականի քննության համար նախատեսված շտեմարանների բառակազմական բազմազան առաջադրանքներին) Արտաշես Մարտիրոսյանը ներկայացնում է. «Ընդունելով ժամանակակից բարդությունների դասակարգման վերաբերյալ բոլոր առկա մոտեցումները (1. ըստ բառակազմական եղանակների ու կառուցվածքային առանձնահատկությունների՝ ա) բուն կամ իսկական, բ) կցական, գ) կրկնական, դ) հատվածական, 2. ըստ բաղադրիչների քերականական հարաբերության ա) համադասական, բ) ստորադասական) մենք առավելապես որդեգրել ենք ջահուկյանական դասակարգումը ըստ համընդհանուր լեզվաբանական տեսության: Ըստ այդմ՝ նորակազմ բարդությունները կներկայացվեն միաժամանակ ա) ըստ բաղադրիչների քերականական հարաբերության (համադասական, ստորադասական), բ) ըստ բաղադրիչների միակցման ձևի (համադրական, վերլուծական), գ) ըստ բարդության բաղադրիչների քանակի (երկբաղադրիչ, եռաբաղադրիչ և այլն), դ) ըստ բարդություն կազմող բաղադրիչների խոսքի մասային արժեքի» (8. 61): Այստեղ ընդհանուր սկզբունքներից դուրս են մնում հնչյունաբանական ու բառագիտական ընդհանրությունները, իսկ ընդհանուր դասակարգումը պետք է լեզվաբանական բոլոր մակարդակներից ելնելով կատարել, որն առավել դյուրին է դարձնում ուսուցումը թե բուհում, թե դպրոցում: Դրանք կլինեն հետևյալ կերպ. 1. ըստ բաղադրիչների միակցման (համադրական կամ կցական, վերլուծական կամ հարադիր և խառը), 2. ըստ բաղադրիչների քանակի (երկարմատ, եռարմատ և այլն), 3. ըստ կապակցման միջոցների (զրո, հոդակապ, գիծ), 4. ըստ հիմնական ձևույթների պահպանու-

թյան (հնչյունափոխված, չհնչյունափոխված, հատվածական, խառը), 5. ըստ արմատների ծնաիմաստային հարաբերության (նույնարմատ կրկնավոր, տարարմատ հոմանիշ, առնչակից, հականիշ, չեզոք), 6. քերականական ծնաբանական (ըստ խոսքի մասի պատկանելության) և շարահյուսական (ըստ հիմնական ծնույթների հարաբերությունների ստորոգումային, համադասական և ստորադասական), 7. ըստ արմատների հարաբերությունների ընկալման աստիճանի մթագնված, չմթագնված: Այժմ դրանք ամփոփ քննարկենք առանձին-առանձին:

1. Ըստ արմատների միակցման. ա) *համադրական կամ կցական*, երբ բաղադրիչները գրվում են իրար կից, միաձույլ գրատախտակ, թրթռալ, ոսկեվառ, հորեղբայր, տասնութ, լուռումունջ, մերձիմահ, ուսմասվար, բուհ, ՄԱԿ (կցական անվանումը որպես գիտաբառ, ավելորդ է համադրականի ենթատեսակ ճանաչելը, քանի որ համադրականները բոլորն էլ իրար սերտ կցվում են. դա առավել դյուրին կդարձնի ուսուցումը 10. 65), բ) *վերլուծական հարադիր*, երբ գրվում են առանձին կամ գծիկով առաջ քաշել, գլուխ տալ, դար ու փոս, հարյուր մեկ, նստել-լռել, ճեփ- ճերմակ, մեկ չորրորդ, Աստղիկ Արամի Աղայան, Մեծ Արջ, գ) *խառը*, երբ բաղադրյալ բառի կառույցում երկու ձևերն էլ առկա են Արցախի Հանրապետություն (ԼՂ Հանրապետություն), Արշակունյան Վռամշապուհ, ութ հարյուր քսանմեկ, երկու քսաներեքերորդ, տասնհինգ-տասնհինգ (թվական հարադրյալների վերաբերյալ Ս. Էլոյանը թյուրիմացաբար նշում է. «Հարադրական բարդության այս տեսակը քանակապես անհամեմատ քիչ է»(6. 271), բայց չէ՞ որ նրանց քանակը գերշատ է. երևի նկատի է ունեցել բառարանում չընդգրկվելը (բոլորիս հայտնի է, որ բազմաթվության պատճառով, համաշխարհային մակարդակով, բառարաններում, ուղղագրության ուսուցման նպատակով միայն ընդհանուր նմուշներ են զետեղում)):

2. Ըստ բաղադրիչների քանակի. ա)*երկարմատ* ԱՄ, ակնածել, թղթադրամ, կեսօր, քսաներկու, հարյուր տաս, մեծ-մեծ, հեռու մնալ, բաղադրյալ ստորոգյալ, բծավոր տիֆ, *բ) եռարմատ* հեռախոսազրույց, հազար ութ հարյուր, կաս-կարմիր կտրել, ներս ու դուրս անել, հորեղբորորդի, տանտիկին, բուհ, գ) *քառարմատ* (հիմնականում թվականներ, մնացածները քիչ են) հեռագրասյունաշարք, յոթ սարի հետև ընկնել, ՄՀՆՋ ՈՀՆՋ (ՕՍՕՆ), ՁԻԱՀ (սպիդ), Երքաղկանաչչհին, Երխնայդրամարկղ, տասնյոթ քսանմեկերորդ, հիսունվեց-հիսունութ, էթիլածխաջրածին, ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն, *դ) հնգարմատ* (էլի հիմնականում թվականներ են, մնացածները սակավ) ՀԱՀԳԲ (ԱՍԱԼԱ), լավսան (лавсан- лаборатория высокомолекулярных соединении Академии наук СССР), Երքաղգավգործկոմ, միջոցի անուղղակի

խնդիր երկրորդական նախադասություն, ինը հազար չորս հարյուր քսան, չորսհարյուրհիսունհինգամյա, ե) *վեցարմատ* (նախորդի նման) ՅՈՒՆԵՍԿՕ (United Nations Educational, Scientifik, Cultural Organization), ութ հազար հիսուն- ութ հազար հիսուն, երեք միլիոն հինգ հազար ութ հարյուր, տնով-տեղով վեր կենալ պուկ փախչել, միջոցի անուղղակի խնդիր երկրորդական նախադասության կրճատում, զ) *յոթարմատ* (սա և հաջորդները թվականներ են) երեք միլիարդ չորս հարյուր հազար միլիոն մեկ և այլն:

3. Ըստ կապակցման միջոցների. ա) *հոդակապով* *-ա-*(նաև հնչյունա-փոխված *ի+ա-ե)* սեղանատուն, ոսկեվարս. *-ե-* հաշվեկշիռ, *և, ու, հա* ելևէջ, խորդուբորդ, չոր ու ցամաք, տուր հա տուր. *առ –ի, -զ, ըստ, ընդ* գույնզգույն, մեկ առ մեկ, մերթընդմերթ, մերձիմահ, ինքնըստինքյան, բ) անհոդակապ այդտեղ, բարբառ, ջրկիր, էսեռ, տնետուն, կողք կողքի, ուղիղ խնդիր. գ) *գծիկով* հայ-արաբական, փունջ-փունջ. *դ) խառը* էջմիածին, տասնմեկուկես, որդեգրություն անել, մեծ-մեծ խոսել, հինգ հարյուր տասնվեց և այլն:

4. Ըստ բաղադրիչների ձևույթների պահպանության ա) *չհնչյունափոխված* ասուլիս, ակնառու, մայրաքաղաք, վեր կենալ, հազար-հազար, գլուխ տալ. բ) *հնչյունափոխված* առվահան, ընչաքաղց, կարկառել, քաշքշել, կաս-կարմիր. գ) *հատվածական* ԳԱԱ, հեղուկգազ (թեկուզ նշված ձևույթները անխաթար են, բայց այլ բաղադրիչներ հատված, կրճատված են հեղուկ գազ արտադրողների վարչություն, գրասենյակ), հայ-ռուսական (հայկական-ռուսական *հայկական* բաղադրիչի *-ական* բառակազմական երկրորդական ձևույթի հետ հատվել է նաև *հայկ* արմատի վերականգնված արմատական կ-ն). դ) *խառը* միջբուհային, բուժսանմաս, Հայկական ՍՍՀ, ՀԿ Միություն (Հայաստանի կինեմատոգրաֆիստների միություն), վաքսուն-յոթանասունական:

5. Ըստ արմատների *ձևաիմաստային հարաբերության*. ա) *նույնարմատ կրկնավոր*. աման-չաման, չորս- չորս, կարկառել, ծուռումուռ, սարեսար բ) *տարարմատ հոմանիշ* երփներանգ, խայտաճամուկ, չվերթ, դարդ ու ցավ, մազ-մորուք. *առնչակից* կահ-կարասի, նստել-ուտել, սար ու ծոր, գլխուղեղ. եզրագիծ. *հականիշ* գիշեր-ցերեկ, գնալ-գալ, դառնանուշ. *չեզոք* (նախորդ հարաբերությունները չունեցող) թնդանոթ, ծեռնարկ, բջջահեռախոս:

6. Ըստ արմատների *քերականական հարաբերության*. *ա) ձևաբանական ըստ հիմնական ձևույթի խոսքիմասային արտահայտության* (բնական է, մի շարք բառերի ձևույթներ մթագնված են, իմաստափոխված և վիճահարույց տեսակ է լինում, ինչպես՝ չէ, ոչ, հետ և այլն). նույն խոսքի մասեր *գոյ. + գոյ.* աղուհաց, անց ու դարձ, գիշեր-ցերեկ, ջրշուն, վագոն- ռեստորան. ռազմածովային, ՈԴ, *ած.+ած* հեգաճկուն, լռիկ-մնջիկ, սիփ-սև, ծանր ու թեթև.

թվ. + թվ. տասներեք, չորս-չորս, հինգ հազար. *դեր. + դեր.* ամենուր, այլևայլ, ինձ ու ինձ, ինքնըստինքյան, իրեն-իրեն, *բայ +բայ* պառկել-քնել, գնալ-գալ, թրթռալ, հեղհեղուկ, *մկբ. +մկբ.* դեմառդեմ, դես ու դեն, մերթ-մերթ, *եղ. +եղ.* չէ մի չէ, չէ ու չէ, ոչ ու այո, հա մի չէ (ոչ, չէ կառույցների հատույթավորումը, ստուգաբանությունը իրեն չի արդարացնում եղանակավորող բառերի ուշ ձևավորման պատճառով), *ծայն. + ծայն.* է՛յ-հե՛յ, թրըխկ հա՛ թրըխկ, հա՛յ ու վա՛յ, վա՜շ-վի՜շ, հե՛յ-վա՛խ, խառը (բազմազանությունը շատ է) *գոյ. + ած.* և *հակառակը* երեսպարզ, ծյունասպիտակ, թխավարս, մեծահոգի, *գոյ. + թվկ. և հակառակը* երկսայրի, քառանդամ, երկամյա, *գոյ. + դեր.* ինքնագլուխ, յուրօրինակ (հակառակը չկա), *գոյ. + բայ և հակառակը* գլուխ գալ, ջրվեժ, աշխատաժամ, քսայուղ և այլն: Այսպիսի տեսակներում բազմաբաղադրիչներն առավել շատ ենթատեսակներ ունեն: բ) *Շարահյուսական հարաբերություններ ստորոգումային* (այս հարաբերությանը հայ լեզվաբանությունում քիչ են անդրադարձել. դրանք են 6.300, 342, 7. 314, 10. 66, նույնիսկ XXI դ. լույս տեսած տվյալ հարցը քննարկող նյութերում այն բացակայում է միայն համադասական ու ստորադասական հարաբերություններն են հիշվում 8. 61, 9. 15, երևի պատճառն այդ տիպի բառերի համեմատաբար քիչ լինելն է) ովևիցե, որևէ, էջմիածին, ինքնաեռ, ինքնածիգ, (տերողորմյա բառում կոչականի պատճառով ենթական զեղչված է. բայց նրա հարաբերությունն ընկալելի է 6. 300), *համադասական* թև ու թիկունք, կտոր-կտոր, հեզաճկուն, վայրիվերո, առևտուր, *ստորադասական որոշչային* այսօր, կարմրակատար, *հատկացական* մորաքույր, դրամարկղ, *խնդրային* բեռնակիր, ջրածին, հրակայուն, մեքենագիր, *պարագայական* հեռուստացույց, արագավազ, արևախանձ, *խառը* (երկուսից ավելի հիմնական ձևույթ արմատ ունեցող բառերում երբեմն տարբեր հարաբերություններ են լինում) *ստորոգումային և որոշչային* էջմիածին, *որոշչային, հատկացական* միջմայրցամաքային, ԱՄՆ, *խնդրային, որոշչային* կինոփառատոն և այլն: Մի շարք բառերի շարահյուսական հարաբերությունների մթագնվածության կամ որոշ բաղադրիչների բացակայության պատճառով նույնիսկ տարբեր հարաբերություններ կարելի է վերծանել, որովհետև բազմիմաստություն է ստեղծվում (7. 312): Օրինակ ջրածին 1. ուղիղ խնդիր ջուր ծնող, 2. անջատման խնդիր ջրից ծնվող, 3. տեղի պարագա ջրում ծնվող, կամ ինքնագոհ 1. ստորոգումային (բաղադրյալ ստորոգյալ ինքը գոհ է), 2. վերաբերության խնդիր իրենից գոհ, 3. միջոցի խնդիր իրենով գոհ (նախընտրելին առաջինն է):

7. Ըստ *արմատների ընկալման* ա) *չմթագնված* (երբ հիմնականում բացահայտ են ձևույթները և միջնակարգ կրթությամբ անձնավորությունը կարողանում է բոլոր հիմունքներով վերլուծել) սեղանատուն, այսօր, տասնութ, ծափ տալ, կենսագրություն, ՀՀ, հարավ- արևելք, ռուս- ճապոնական, մեկ առ մեկ, բ) *մթագնված* (երբ ընկալելի չեն բաղադրիչները, նրանց հարաբերությունները և այլն) հլու, տիկին, գլխարկ, ծերբակալել, թռվռալ, լավսան, ՋԻԱՀ, ականջ մտնել, մի մատնոց, տուրուդմփոց, չվերթ, ուղեկալ, և այլն: 7-րդը մասնակիորեն *իսկական, կցական*, ինչպես նաև անհոդակապի *կաղապարված* ու *փոխանցումային* բարդություններում էլ է մեկնաբանվում:

Այսպիսով բառաբարդումը նախընտրելի է ընդհանուր յոթ հիմունքով քննարկելն ու յոթ տեսակի բաժանելը:

---

1. Ջահուկյան Գ., *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Եր., 1989:
2. Ջահուկյան Գ., *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Եր, 1974:
3. Գալստյան Ս., *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Եր., 1978:
4. Պետրոսյան Հ., *Հայերենագիտական բառարան*, Եր., 1987:
5. Աբեղյան Մ., *Հայոց լեզվի տեսություն*, Եր., 1965:
6. Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., *Ժամանակակից հայոց լեզու*, հ. I, Եր., 1979:
7. Սուքիասյան Ա., *Ժամանակակից հայոց լեզու*, Եր., 1982:
8. Մարտիրոսյան Ա., *Նորակազմ իսկական բարդության մեկ մասնակաղապարի քննություն*, «Հայոց լեզու և գրականություն» ամսագիր. Եր., թ. 1-2, 2003:
9. Ղազարյան Հ., *Լեզվաբանական տերմինների համառոտ բառարան*, Ստեփանակերտ, 2004:
10. Մինասյան Ս., *Արդի հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն)*, Ստեփանակերտ, 1999:
11. Աղայան Էդ., *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Եր., 1984:
12. Ջահուկյան Գ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քոսյան Վ., *Հայոց լեզու*, Ա պրակ, Եր., 1980: